

**7. ՆԵՐԲՈՂԵԱՆ ՎԻՊԱՍԱ[ՆԱ]ԿԱՆ Ի ՓՈԽՈՒՄՆ
ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿՈՒՍԻՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԻՆ
ՍՐԲՈՅ, ՈՐ ԲԵՐԵԱԼ ՀԱՆԳՈՒՅԱԻ [Տ]ԵՍՉՈՒԹԵԱՄԲ
ՀՈԳՈՅՆ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՆՁԵՒԱՑԵԱՑ,
Ի ՏԵՂԻՆ ԿՈՉԵՑԵԱԼ ՀՈԳՈՅ ՎԱՆՔ**

Աստուած և տէրն ամենայնի
Եւ արարիչն արարածի,
Որ է՛րն և է՛ և եղիցի՛
Եւ յանբաւիցս ոչ պարագրի:

Ահեղանկարն աշխարհի
Եւ գաղափար բնաւ գոյի,

Գերակատար բունն բարի
Եւ համասփիւռ ճանանչն արփի:

Որ մինչև շէր նկարն երկնի
Եւ անհաստատ հիմունք երկրի,
Փառաբանիր անլռելի,
Երրորդութիւն անճառելի:

Իսկ անկարօտն յամենայնի
Եւ կատարեալ էն առաջի,
Ի յոչ էից է երկակի
Յառաջ մատուց զնիրթս էակի:

Զերթերն վերին կմբէթ յերկնի,
Զնոյն և հիմն յատակի,
Զմիջոց ծոցոյ այսմ անբաւի,
Որ պարտեալ են քառակի՝

Լուսապարար շարս կարգի,
Զի լուսատու լիցին յերկրի
Զգայականաց վայելչալի
Եւ տնկական բուսոց բերրի:

Հսկան հզօր յարաշրջի,
Յորոյ տապէ ոչ ոք թաքչի,
Դաստիարակ զլուարթ գինի
Շնչականաց և անշնչի:

Նոյն աստանօր աստ հիմնարկեաց
Զեկեղեցի իւր զոր փրկեաց,
Խառնեալ սեղան արեամբ ներկած
Ազատ յալեացն, որ մրրկած:

Անդ պաղպաջուն լուսաւորաց,
Նրով անդրէն զնա զարդարեաց,
Աստ զյիշատակ սրբոց վառեաց,
Գեր քան զնա փառաւորեաց:

Զորս քան զաշխարհս յառաջ ընտրեաց
Զմարգարէից և զնախահարց,
Զհայրապետաց, զմարտիրոսաց,
Մաքուր կուսից կրօնաւորաց:

Որք ընկալան զքանն կենաց՝
Մաքուր մօրէն մեր փրկանաց,
Նր ողջ խոկումն է կուսանաց,
Զափ և քանոն առաքիներաց:

Զի որպէս մեծն յաստեղաց
Ծոխ յասպարէզն յարատևեաց,
Սա զերկնային լոյսն տեղեաց՝
Զմէզ մթութեան ի մէնջ եքարձ:

Որ և թեթև ամպաւ չուեաց
Ընդ կենցաղոյս այս ծովընթաց,
Հողմով հոգոյն վարեալ թևեաց,
Վեհ երևեալ վերնականաց:

Նաև այս գեղմ ի սուրբ գառանց,
Վայր հայրաբուղիս կրկին վտակաց,
Զովացուցիչ պասքեալ ազանց
Եւ լուացումն մաքուր մանկանց:

Այս ծաղկազարդ սուրբ գաւազան
Ի յարմատոյն բղխեալ Դաւթեան
Եւ գահ երկուցն պետութեան
Յանգեալ ի պետն տէրութեան:

Զի մինչ ի բոյսն արդարութեան
Երեք կղեալ ի խառընման,
Նախ Ահարոնն Ղևտական
Կալաւ զդուստր Ամինադաբայն:

Եւ Յովիդէ մեծ քահանայն,
Զդիցազինըն Յովրամայն,
Իսկ Յովակիմ զարմըն Դաւթեան
ԶԱննա էառ զդուստր Մատթայն:

Զքոյր Սովիւէ և զՄարեմայն,
Ուստի բուսաւ ոստն աննման,
Յորմէ զխայրին կթեաց Ադամ,
Զամբեալ եկաց ի յաիտեան:

Որ ի լնուլ երից ամեան
Զայնեալ եղև տէրն յանդիման,
Բարձեալ թողաւ զերդն Եսայն
Տէրն կալաւ հօրըն փոխան:

Իսկ ի յամին չորեքտասան
Ծերն պարկեշտ եղև պաշտպան,
Կնքեալ նամակ անպարզական,
Տաւ առ առն գիտնական:

Որ յետ երից ամսոց լրման,
Մինչ հարսանեացն կայր խոկման,
Առ զաւետինսն կուսական,
Սիրով հարեալ հարսն առ փեսային:

Զոր ի յաւորն փեսայութեան
«Ելէք,— ասէր,— դստերք համայն,
Ընդ Սողոմոն հայել արքայն
Պսակազարդ ի Գողգոթայն»:

Այլ որ ահեղ անդ որոտայր,
Թողուլ նոցա առ հայր կարդայր,
Զկոյսն կուսին յորդէգիր տայր,
Կտակագիրն, որ ընդդէմ կայր:

Եսայիաս հոգով խայտար
Զայս նախագրէր այլանկար,
Յայր մի տըլաւ ծալեալ տումար,
Որ դպրութեան ոչ հմտանայր:

Եւ որ վանեաց զչարին հնար
Զոսոխն մեր դատեալ արդար.
Կարմրագգեստ, հնձանահար,
Փառօք առ հայր վեր համաշատնայր:

Յայնժամ մատեալ մայրն և ողբայր
Ժտեալ յորդոյն ամենակար.

«Դու համբառնաս ի փառս անճառ
Եւ զիս թողո՞ւս պանդխտաբար»:

Նա խոստացաւ յոյժ կամակար,
Թէ ոչ թողից յերկիր օտար,
Այլ ես ածից զքեզ առ հայր
Եւ զնիւթականրդ շաղաշար:

Ապա զյետոյսըն մ[ո]ռանայր,
Յառաջադէմըն սլանայր,
Յանցաւորէն քակիլ ջանայր,
Զի ընդ անանցն միանայր:

Ամաց վաթսուն յերկրի մնայր
Ընդ մկրտեալսն ուրախանայր,
Փոխանորդաւ որդոյն ցնծայր,
Բայց անդրանկան սիրոյն ըղձայր:

Երկուտասան ամրք լցեալ,
Յօրէ յորմէ տէրն ամբարձեալ,
Ապա վերնոց պետին իջեալ,
Զբրաբիոնն ոստ մատուցեալ:

«Ե՛կ, մերձաւոր, ձմեռն անցեալ,
Ահա այգիս մեր ծաղկեցեալ,
Յատանելոյ ժամն մերձեալ,
Զայն տատրակի աստ հնչեցեալ»:

Յայնժամ և կոյսն ուրախացեալ
Զմաքուր կուսանս անդ կոչեցեալ,
Զանուշ բերանն իսկոյն բացեալ,
Ի սուրբ պատուէրս առատացեալ:

«Որք սուրբ հոգոյն էք հարսնացեալ
Եւ սրբութեան ուխտի կացեալ,
Արի ի նոյն լիջիք դարձեալ,
Առագաստին լապտերք լուցեալ»:

Սուրբն Յոհաննէս յառաջ մատեալ,
Ընդ մօր գթոյն խանդաղատեալ,
Նա զյայտնութիւն իրին պատմեալ
Եւ վասն եղբարցն՝ թէ կարօտեալ:

Այլև ընդ այսմ ամենայնի
Պարտիմք գիտել զսոյն յայտնի,
Զեղեալ գրեալ սքանչելի,
Որ ի ննջումն Աստուածածնի:

Զի է գրեալ Յովհաննիսի
Եղբօր սրբոյն Յակոբոսի,
Աւետարանիչ տէրն Յիսուսի
Նրդի եղեալ Զեբեդոսի:

Յորժամ փոխիլ մօտեալ աստի
Մարիամու մօր կենսաստի,
Երսուն աւուրքք յառաջ լինի
Գալ հրեշտակին Գաբրիէլի:

Եւ խոնարհեալ երկրպագի
Տէրն ծնօղի Մարիամի
Եւ ատենաց ուրախալի.
«Բերկրեալդ ի յագգըս Եւայի,

Ձի կոչէ զքեզ տէրն ամենի
Յիսուս որդին քո սիրալի»:
Եւ ետ նմա զպսակն յայտնի՝
Ջբրաբիոնն հրաշալի,

Որ ի յոստոց արմատենի
Հիստեալ ընտիր զարմանալի,
Ձոր էր բերեալ դրախտէն մեծի
Եւ եդ ի գլուխ սրբոյն կուսի:

Ձի առաքեալք տեսցեն յայտնի
Եւ օրհնութիւն տան առաջի,
Հօր և Որդոյ և սուրբ Հոգոյն,
Ստեղծչին գոյից ամենայնի:

Եւ զի նշանք լիցին հրաշի
Ի պսակէն բրաբիոնի
Եւ զօրութիւնք բժշկութեան
Առ ի տեսիլ սքանչելի:

Իսկ սուրբ կուսին Մարիամի
Իբրև էառ ատետալի
Ձփոխիլն աստէն առ տէրն երկնի
Յուրախութիւն անճատելի:

Եւ զքրաքիոնն պանձալի
Վասն իւր քերեալ քիւր քարելի,
Ետ օրհնութիւն տէրն Յիսուսի
Ելս ի մտի եդեալ աստի:

Ելեալ ի լեառն Զիթենեաց,
Զի անդ կացցէ ի յաղօթի
Եւ անդ եղև հրաշս յայտնի
Ի յաղօթելն Աստուածածնի:

Զի ամենայն բոյսք դալարի
Եւ տունկք ծառոց անդ խոնարհի,
Առ ի յողջոյն սրբոյն կուսի
Երկրպագեն մօրն Հիսուսի:

Եւ յաղօթելն Աստուածածնին
Այսպէս ասէր յիրում սրտին.
«Դու, տէր, իմ տէր, Յիսուս որդի
Եւ աստուծոյ հօր հօգօրի,

Դու խոստացար գալ ի յերկրի
Եւ զիս հանել յերկինս երկնի
Եւ քո խոստումն է բաղձալի
Անտարակոյս 'ւ անստելի»:

Յայնժամ Յիսուս յերկնից ձայնեալ
Առ սուրբ կուսին խանդաղատեալ
«Մի՛ երկնչիր, մայր սրբասնեալ,
Ես գամ առ քեզ կառօք բազմեալ:

Եւ ոչ թողից զճնողդ օրհնեալ
Ի կատարել զիմ խոստացեալ,
Այլ աւանդեմ զհոգիդ մաքրեալ
Ամբողջ մարմնովդ վեր ամբարձեալ»:

Եւ յետ քանիցքս ատենեալ
Մարիամու նոյն յարուցեալ,
Զերիս աւուրս շրջագայեալ,
Զտնօրհնականս փրկչին եղեալ:

Եւ յամենայն տեղ աղօթեալ,
Փափագանօք ողջագործեալ,
Դարձաւ ի տուն իւրոյ եկեալ
Եւ ի գահոյսն եղև բազմեալ:

Ապա Յոհան որդին եղեալ,
Որ քարոզէր զՔրիստոս օծեալ,
Ի մերձակայս Պաղեստինոյ
Գեօղօրէից շրջագայեալ:

Անտէն դարձեալ առ կոյսն եկեալ,
Զոր էր յաւանդ նմին տուեալ,
Որ և կուսին յայտ արարեալ,
Վասն փոխման իւր հանդերձեալ:

Այլև զտեղի իւրոյ թաղման
Ի հայրենիսն իւր ասացեալ՝
Գեթսամանի ձորըն կոչեցեալ,
Որ էր շիրիմ ծնողացն եղեալ:

Եւ ասացեալ Յովհաննիսին
Մատչել յաղերս սուրբ խորհրդին,
Պատարագել զսուկալին,
Զի հաղորդիմ մարմնոյ փրկչին:

Յայնժամ ելեալ սուրբ Յոհաննին
Ի վերնատունն խորհրդին,
Յիշատակել ըստ տեառն բանին
Վասն իւր ծնողի Աստուածածնին:

Յայնժամ հոգին մատակարար
Գնդին սրբոյ ազդ արարեալ,
Որք փոյթ ընդ փոյթ անդ գումարեալ
Եւ ձայնակից նմին եղեալ:

Որք ի հոգոյն վերաբերեալ
Յանկարծակի եղեն եկեալ,
Դասք երջանիկ պետից ընտրեալ,
Որք յամենայն յաշխարհ գնացեալ:

ԶՔրիստոս աստուած քարոզէին
Եւ զյարութիւն պատմէին,
Ի նոյն ժամայն անդ գումարին,
Որք ընդհանիր սփռեալ էին:

Պետրոս ի Հռոմայ,
Այլ և Պօղոս էր ընդ նմին,
Թովմաս ի Հնդկային
Եւ Թադէոս Հայոց Մեծին:

Փիլիպպոս ի Հաբաշին
Եւ Մատթէոս Ասիրային,
Անդրէաս ի Սպարտայոյ
Եւ Ծմառն Մովրիտային:

Յուդայ յնրմոյ եկաւորի,
Մատաթիաս Փոիգային,
Մարկոսն սուրբ Թերաիդոյ,
Ղուկաս եկեալ Դաղամատային:

Եւ այսպիսի սքանչելի,
Որ չէ եղեալ յազգ մարդկային,
Զի տասունք 'ւ եօթանասունքն
Յական քթթելն եկեալ հասին:

Եւ յարձակման պատարագին
Ի կատարման սուրբ խորհրդին,
Երկիր պագին աստուծոյ մօրն,
ԶՅիսուս ասանդն ողջոյն տուին:

Ապա զմիմեանս համքուրեցին
Յողջոյն սիրոյ կենարարին
Եւ գոհութեամբ աստուածային
Հիանալով զարմանային:

Եւ օրհնեցին զաստուածն մին
Ի հաւաքումն ի հանդիսին,
Զի ի վարկեան ժամանակին
Ի կոչմանէ հոգոյն հասին:

Իսկ սրբուհի Աստուածածին
Ի ծագ արևու առաօտին,
Համբարձ զձեռս իւր հրաշալին
Առ տէր աստուած պաղատագին:

Դարձեալ անտի ի յանկողին
Ի պատգարակս իւրոյ զսպին,
Պետրոս նստէր ի սնարին
Եւ Յովհաննէս պատուանդին:

Ամենեքին շուրջ պարստեալ
Զմահճօք կուսին դասակարգեալ,
Սիրոյ զոտիւք սրբոյն փարեալ
Զայնի երգոյ օրհնաբանեալ:

Զի հարսնուհին կայր հրաւիրեալ
Առ բաղձալին իւր ըղձացեալ,
Ի յառագաստն աստուածարեալ,
Զոր խոստացեալ էր նմա տալ:

Էին անդ եպիսկոպոսք
Գերաստիճանք, տիրասնունդք,
Յակոբոս՝ եղբայր տեառն,
Գոլ խաչաբարձ կենսաստեղունք:

Ի սուրբ խաչէ կենաց փայտէն
Առեալ ի ձեռն իւրոյ անդէն
Դիոնէսիոս յԱրիսպագէն,
Որ վարդապետն էր յառաջմէն:

Յոէթէնս գերհրաշալիս
Որ աշակերտն էր Պօղոսին,
Որ ի գովեստ Աստուածածնին
Զարհուրեցոյց զհրեղէնս վերին:

Յայնժամ սրբոյ Աստուածածնին
Կամէր վճարել զկեանս երկրային
Եւ փոխադրիլ առ իւր որդին,
Որ հրաւիրեալն էր նա նմին:

Իսկ Յոհաննու ատարանչին
Յայտնէ զփայտ սուրբ պատկերին,
Որ էր մասն սրբոյ խաչին,
Զոր կենսատուին մեր կազմեցին:

Յայնժամ ի միտս եկեալ նոցին
Վասն անջատման յինքեանց նորին,
Նկարակերտ նման նմին
Կազմեն զշերտն կիպարին:

Եւ Յոհաննու կուսի որդին,
Որ Յիսուսէ փոխանորդի,
Ինք կոփեալ զձև պատկերին,
Զոր առ Պետրոս հանդերձ գնդիւն:

Առաքելոյք ամենայնին
Աղաչեցին զԱստուածածին.
«Ա՛ն զտախտակս զայս և օրհնեա՛,
Որ քո փոխան երկրպագին:

Զի յետ ելման յաստեացս յերկին
Յուսով այնմիկ մխիթարին,
Այլև յաղագս բորոտ ախտին,
Որ յոյժ եռայր ի Պաղեստին:

Իսկ ի բացման սուրբ խորհրդին
Մերկ առաջի մաքուր սրտին,
Թէ ընդ զրկիլս ի քոյդ կերպին
Զայս շնորհեացես ընդ քո կրկին:

Զի որք յուսան կուսիդ յորդին
Մասամբս այսու քև յուսադրին,
Այլև վանիչ խստամարտին
Անկերպ ախտին և բորոտին:

Նա զի և յոյժ է տրտմութիւն
Մեզ քո փոխումն ամենևին
Զի քև էաք յուրախութիւն,
Յետ համբարձման մերոյ փրկչին:

Արդ տուր զտիպ պատկերի քո
Մեզ մխիթար յետ փոխման քո,
Ընորհես զսա բժիշկ ցաւոյ
Լինել նշխար հօտիցս քո:

Զի որ փափաքն է քեզ սիրով,
Զսա տեսանեն մեծաւ յուսով,
Լիցցի խնդիրք նոցա փութով
Հայցմամբըդ լի հաւատով»:

Իսկ որ զքժիշկն ադամային
Կրեալ պահէր սուրբ յարգանդին,
Անկար գոլով ասէր յանձին
Դարձուցանէր առ սուրբ գնդին.

«Ջիա՛րդ հարկէք զտէրն աղախին,
Ընկ ժառանգորդք դատող գահին,
Դուք հրաւիրակք էք անմահին
Եւ հօտապետք սուրբ փարախին:

Ձեզ ետ բուժել զվէրս մոլարին
Եւ դիրութիւն այսահարին,
Լսել խլին, հայել կուրին
Եւ թողութիւն պարտաւորին:

Դուք աշակերտք գոլ արարչին
Եւ ձեզ շնորհեաց իշխանութիւն,
Ջդես հալածել յանուն նորին,
Բառնալ յերկրէ զկռապաշտութիւն:

Դուք հայցեցէք վասն այդմ իրին,
Ջի զոր խնդրէք ձեզ լինիցին,
Ջի թէ փակել ետ ձեզ զերկին,
Այլն բանալ զնա կրկին:

Այլն իշխան արար յերկրի
Եւ բարեկամս իր անուանի,
Փրկիչն Յիսուս տէրն ամենի
Ձձեզ կոչեաց իր սիրելի:

Եւ զի նշանքն հրաշալի
Ի ձեռս ձեր ասաց լինին,
Զի ոտք ձեր ուր հասանին
Ոչինչ անհնար ձեզ եղիցին:

Այլ միաբան աղօթեցէք,
Անխոսով սիրով յուղարկեցէք,
Խաղաղութեամբ զիս հասուցէք
Նաւահանգիստն զիս մուծէք»:

Մատեալ խօսել ընդ սուրբ Կուսին
Պօղոս հնչող փողն Յիսուսին,
Եւ օրհորդ առագաստին
Կայթէր ընդ սէր մաքուր հարսին:

«Ո՛ւ Վ տիրամայր, սուրբ միաճնին,
Մէք անարժան ծառայք նմին,
Արարիչն ընդհանուր գոյին
Ի քէն հաճեցաւ առնել մարմին:

Արժանացեալքս այսմ մասին
Առաքելոյ ընտրեալ շնորհին,
Որդոյդ սիրով եկեալ ի սմին
Եւ մասնաւոր հոգոյն շնորհին:

Իսկ դու ծնօղ հօր միաճնին,
Մէք հրովարտակք գոլով նմին.
Դու հարսն անբիժ Երրորդութեան,
Մէք փողք հնչողք զճնունդ քոյին:

Որպէս տէրն ետ զմահուն իւր փայտ
Առ յինքենէ աստէն պատանդ,
Յուսով ի նա յենուլ անխախտ,
Որք ի մեղաց ընկղմեալ յաղտ:

Տայցես և դու զփայտիս տախտակ
Ընդ ելս քո մահու կտակ,
Մեծ տրտմութեանս մեր ներհակ,
Եւ դու սովաւ՝ ընդ մեզ անքակ»:

Յայնժամ անեալ կուսին սրբոյ
Զպնակիտ չնչին նիւթոյ,
Ի հայրախնամ խնդրեաց գթոյ
Յառաքողէն յայնժամ որդոյ:

«Որ առաքեցեր զքո միածին
Վասն աշխարհի առնուլ մարմին,
Յանարժանէս քո աղախին,
Որ կատարեաց զգրեալս օրինին:

Եւ համբարձաւ առ քեզ կրկին
Ի փառս անճառ սեփհականին,
Որ էր ընդ հօրդ և ընդ հոգին
Անքակ, անքաժ գոլ ի մարմին:

Արդ աղաչեմ զհայրըդ վերին,
Բա՛րձ գթութեամբ զախտ բորոտին,
Ի մարդկանէ, որ տագնապին
Ի ձեռն այսու նկարեալ փայտին:

Տուր զգօրութիւն Երրորդութիւնդ
Տպաւորելոյ ի տիպ [ն]որին.
Ի ձեռն իմոյ աղաչանացս
Ի կատարել զխնդրելին:

Որ բարձեր զյանցանս նախաստեղծին
Ի ձեռն որդոյ քո միածնին՝
Յիսուս Քրիստոս մարդկան փրկչին,
Որ կատարեաց զտնօրէնութիւն կամաւ քոյին:

Արդ կատարեա զխնդիր սոցին
Զընտրեալ արանցս փոքու հօտին,
Որք բանի քո հրաման առին,
Ընդ ոլորտս երկրի քարոզեցին:

Որք առ ի քէն առաքեցան,
Անջուր լերանց գետք ընթացան,
Տուր զայս սոցա՝ որպէս ըղձան
Ընդ ելս իմում կալ մահարձան,

Զի քեզ լիցին յար պաշտպան
Փառաբանիչ Երրորդութեանդ,
Հօր և Որդոյ, Հոգոյդ բնական
Օրհնեղութիւն միշտ յաւիտեան»:

Յայնժամ կամար լուսոյ եկաց,
Զանձամբ կուսին պարափակեաց,
Եւ խաչաձև լոյս ծաւալեաց
Զսուրբ պատկերն անդ պսակեաց:

Եւ ընդ լուսոյն ձայն երկնային
Հնչեաց առ կոյսըն տիրածին:
Ասէ. «Հայցուածք քո եղիցին,
Զոր և կամիս փոյթ կատարին»:

Եւ նոյնժամայն որոտագին
Հոտ անուշից բուրեաց ուժգին
Եւ ի հոտոյն աստուածային
Թմբրեալ զմայլեաց զքիմս ամենին:

Բայց առաքեալքն, որ նստէին,
Ի շարժմանէն ոչ սուկային,
Զի տեսութեամբ աստուածային
Վարժեալ և կիրթ գոլով էին:

Եւ յերրորդում ժամօրէին
Էջ տէրն յերկնից զօրօք վերին,
Եւ Քաբրիէլ և Միքայէլ
Զօրօք կային սպասու նորին:

Եւ մինչ ունէր մայր կենսատուին
Զտիպ կիպարին յիրում ձեռին,
Կալեալ հանդէպ աստուածորդոյն
Տէրն Յիսուսի իւր միածնին:

Եւ տէրն մեր աջ հզօրին,
Իրով ձեռօքն աստուածային,
Տեաննագրեաց զձև պատկերին,
Օրհնեաց բանի հոգոյ շնորհին:

Տարեալ զպատկերըն նկարած
Եղ ընդդիմին սուրբ երեսաց
Եւ արտասուօք յորդ համբուրեաց
Զբժիշկն ախտից վիրաւորեաց:

Եւ մայր կենաց տէրն Յիսուսին
Ետ յառաքեալսն զտիպ պատկերին,
Զկենդանագիր իւրոյ ձևին,
Լցեալ շնորհիւ աստուածային:

Մատեալ Պետրոս երկրպագեաց,
Եւ Պօղոսի ընդ նոյն համբուրեաց,
Ընդ որս և այլ սուրբ ընկերաց
Երկրպագին հետ իրերաց:

Եւ գոհացեալ զտեսունէ շնորհաց
Ի բաց առին ի սուրբ գրկաց
Եւ անդ տեսին նկարագրած
Զաչքն և զբերանն զգոյն երեսաց,

Զարտևանունք սրբոց կուսին,
Զքիմբն և զայլ գեղ պատկերին,
Ամենևին զամենեսին
Նկարագրեալ ի կենդանագրին:

Յետ այսորիկ սուրբն կանգնէր
Բանի առ տէրն անագանէր,
Ի տես Որդոյն միսիթարէր
Եւ գոհութեամբ փառաւորէր:

Օրհներգութիւնս մատուցանէր,
Զի կատարեաց զխոստումն իւր տէր,
Վասն աշխարհի միշտ երկայնէր
Զբազուկն իւր սուրբ աղօթանէր:

Ապա զհանդերձըն մերկանէր,
Հանեալ յանձնէն ի բաց դնէր,
Զնորագոյնս ագանէր
Եւ յանգողինս տարածանէր:

Իսկ առաքեալքն նստէին,
Ծուրջ զնովաւ պար առնէին,
Ներբողինի նուագէին,
Գերապատի մօրն երգէին:

Իսկ տիրուհին պայծառ դիմով
Զշրթունս իւր սուրբ շարժէր մեղմով,
Տեառնէ հայցէր աղօթելով
Ընդ աշխարհի գոլ՝ փրկելով:

Իսկ որ կամէր զկեանս վճարել
Զհոգին յորդին իւր աւանդել,
Տէրն, որ եկեալ էր ի խնդրել
Յերկինս առ հայր դասակարգել:

Յայնժամ սրբոցն սքանչացեալ
Եւ տրտմութեամբ եղեն լցեալ,
Ի յարտասուս եղեն փոխեալ
Եւ դողութեամբ յողջոյն մտեալ:

Գունդն ամենայն ի միասին
Երկիր պագին Աստուածածնին,
ԶՅոթէոս յառաջ ածին
Զաշակերտ ճեմարանին:

Եւ նա հոգովն աստուածային
Սկսա խօսել ի հանդիսին,
Զպատշաճաւոր պատիւ կուսին
Ի լոր ըամիցն ամենին:

Ի մէջ կացեալ աստուածազգեացն
Արտաքս ելեալ թնութեանս ազգաց,
Խօսեալ զպատճառ անճառելեաց
Զխորհրդոյն տեառն անանց:

Բանին մարմին մեր եղելոյ
Ի սուրբ կուսէն մեզ յայտնելոյ,
Ընդ որ հիացեալ առաքելոցն,
Ետուն զփառս տեառն աստուծոյ:

Զահս լուցեալ սուրբ կուսանացն
Եւ զթորմունքս կնդրկաց,
Ի սպաս կուսին փոխան փառաց
Յեկեղեցիսն անդրանկաց:

Ո՛վ սքանչելի մեծ հանդիսին
Աստուածազարդ պարուց խմբին,
Որ սխրալին է և պայծառ
Երկնանման պարակցութիւն:

Մփռեալ յերկրի տիեզերին
Բաժանք միմեանց եկեալ խառնին,
Այլև վերին պարթ հրեղինին
Յերկիր հեղեալ ընդ մեզ խառնին:

Ոմանց սուրբ հարսն վեր ընդունել,
Ոմանց յուղի զնոյն առաքել,
Երկնային զօրք կառս են ածել,
Զաստուածամայրն յերկինս տանել:

Սոքա յղելըն տրտմէին
'Ի ի սուգ մտեալ թախանձէին,
Զնոյվաւ ակուսք առեալ լային,
Վասն անջատման սուրբ տիրածնին:

Նոքա յընդունելն պատրաստին,
Զբազուկս իւրեանց տարածէին,
Խնճոյս առեալ և կայթէին,
Զի զտիրուհին ընդունիցին:

Պետրոս երգէր յոյժ թախճագին.
«Ելս ի մտի եդ սրբուհին,
Աստուածամայրս հովտէս ստորին
Տեղին ուստի ուխտեաց նախկին:

Եկայք հանցուք յելսն վերին,
Զսա ի հանգիստ յաւիտենին»:
Եւ Գաբրիէլ հնչէր ուժգին՝
Յնձալ եկեալ Լիբանանին,

Եկեացես, անցցես ի վեր
Սկիզբն հաւատոյ ուրախաբեր,
Ի Սանիրայ գլխոյն վեհ էր
Եւ Հերմովնի տարափ ցօղեր:

Ի մէջ մորեաց բոյն առիծուց
Եւ ի լերանց դերբկաց ընձուց,
Ելցես յերկինս տեղիք սրբոց
ՅԵրուսաղէմ ջոկ արդարոց»:

Յովհաննէս հեզ ձայն բարբառէր,
Արտասուագոչ ողբ յօրինէր.
«Նուաղեաց սիրտ իմ ի քո սէր,
Որ բաժանիս յինէն», — ասէր:

Ով դու սուրբ կոյս Աստուածածին,
Մայրդ կենաց ճնօղ բանին,
Ինձ մայր տուար ի ժամ խաչին,
Թէ յախտեան ընդ քեզ լինիմ:

Այժմ գնաս դու վեր յերկին
Եւ զիս թողուս աստ ի ստորին,
Ասող է մեզ որդոցս քոյին
Ի տարագրիլս վերստին»:

Եւ Միքայէլ պար յօրինէր,
«Սրտացուցեր զմեզ ի քո սէր,
Հարսն երկնաւոր, քոյր մեր, — ասէր, —
Քառամանեայ զորդու ունէր:

Զի գեղեցիկ են ստինք քո,
Հոտ հանդերձի քո ի խնկոյ,
Գինոյ արքեալ լի ի լիոյ
Յարկեալ ծածկոյթ ի խնձորոյ»:

Պօղոս խօսէր առ արքունին.
«Ո՛ւմ սպասաւոր,— ասէ,— լինիմ,
Զքերս ընծայից հեթանոսին
Ո՛յր նուիրիլ պատրաստ իցիմ»:

Զպաշտպան լինելս ի մէնջ բարձեր
Զտունն աստուծոյ ընտրել գնացէր,
Զհարկս եղոմայ լքեալ թողէր,
Բնակ յերկինս քեզ գտէր»:

Իսկ պարք արքոց քերովքէին
Եւ գունդ հրեղէն սերովքէին,
Տեսեալ զկոյսն օրհներգէին
Եւ զհամբառնալն երանին:

«Ո՛վ է սա, որ ելեալ է
Իբրև զարև յառաւօտէ,
Որպէս լուսին, որ լրացեալ է,
Իբր զհիացումն կարգեալ է»:

Յակոբ եղբայրն տեառն Յիսուսին,
Իբր նախընդել սպասէ նմին,
Ծուրջ զնովա ի պաշտօնին
Մոնչելով հեծեծագին,

Ասէ. «Գուժեաց ձայն ահագին
Միջի մերում ողբումն ուժգին
Աշխարհ և լաց ողորմագին
Եւ գորոշիլս անհնարին»:

Իշխանութիւնք և պետութիւնք
Վերինք ահեղ հիանալին.

«Ո՛վ է սա, որ ելանէ
Մպիտակացեալ յեցեալ յորդին»:

ՅՌեթէոս մեծ իմաստին
Կրկին կացեալ մէջ հանդիսին,
Խօսէր հրաշիւք զտնտեսութիւն
Աստուծոյ ի կոյսն խորհրդին:

Աստուածաբան եղեալ անին
Ներբողինի հիանալին,
Մքանչացեալ ի խորհրդին
Պատմաբանէր ի հանդիսին:

Տարածէր ան զխորս իմաստին
Մինչև երկրորդ միտս անցին,
Եղև խորհուրդ փոխման կուսին
Տեառն աստուծոյ անիրելին:

Առ տնտեսութեան հիացմանին,
Զոր և մատոյց մեծ սրբուհին,
Աստուածութեան տնօրէնութիւն
Յիրմէ տուեալ տեառն զմարմին:

Քանզի պատմեաց անցա կարգաւ,
Որպէս աստուած այսր հանգեալ,
Տաճար բանին հօր կոչեցաւ,
Հուրն աստուծոյ ընդ հողն խառնաւ:

Որպէս անեղ անարագրին
Աստուծոյ հօր ծոցոյ որդին,
Առ ի սմանէ զհարն մարմին
Եւ ձևացոյց զաստուած ի նմին:

Զհարդ փառաց լոյսն անեղին՝
Մարդ ի սմանէ յայտնեալ ծնանի,
Որպէս ջամբողն տիեզերին՝
Ի ստեանց սորա ճաշակ լինին:

Զհարդ կրողն արարածին
Խնամող տաժօղ եղականին,
Բազկաւ բարձեալ լինի սորին,
Գգուիլ հաճի զերդ երկրածին:

Որպէս տիրօղն հրաբուն սեռին,
Այլև ստորնոց բանականին,
Հնազանդ որդեակ լինի սմին,
Որ յամենայն ազգ ծանիցին:

Եւ թէ զհարդ հօր իմաստին
Առնու հրաման բանի սորին,
Համարձակիլ ի գործ հրաշին՝
Առ ի փոխել զջուրն ի գինին:

Ապա կարող խնամող էին
Ի շարշարանս մօր վշտակցի,
Յաւանդ տւեալ աշակերտին,
Մինչև ի մահ սպասել սմին:

Ոյր աղագաւ բանն անեղին
Հրաւէր այսօր ի կոչ ծնօղին,
Դասուք վերնոց հրեղէն սեռին
Վեր համբառնալ զկոյս տիրածին:

Զայսքան հրաշից սքանչելին
Յայտնաբանեալ զխորհուրդ իրին,
Ի փառս անճառ սրբոյ կուսին
ՅՌեթէոս սրբոյ գնդին:

Մինչդէռ խմբեալ սրբազանին
Առաքելոց դաս երամին,
Քահանայապետքըն առաջին
Շուրջ զմարմնով աստուածակրին:

Քանզի համայն անդ ժողովին
Միահամուռ հոյլք երջանկին,
Որպէս ասաք նախ և կրկին
Զհաւաքումն ընտրեալ հօտին:

Անդ էր եղբայր տեառն բանին
Յակոբ արդարն և հրաշալին,
Պետրոս յաղթող վէմ հաւատին
Ի աստուածաբան Յովհաննիսին:

Եւ ետ խօսից իրաքանչիւն
Վայելչական հօր բանին,
Փիլիսոփայից, ճարտասանին,
Ներգործութեամբ հոգոյն շնորհին:

Իմաստութեամբ տեառն Յիսուսին
Եւ գիտութեամբ հօր հօգօրին,
Որք և զծորանս հոգոյն արբին
Յաւուր մեծի Պենդակոստին:

Աստուածաբան յՌեթէին
Կացեալ ի մէջ սուրբ հանդիսին,
Զխորհուրդս յայտնեալ գաքանչելին
Ի լուր ըամից համայն խմբին:

Որք և լուսանս սքանչանային,
Աստուածընկալ զնա անուանին,
Օրհնաբանող աստուածային
Յայնմ ժամու զնա կոչէին:

Որք և ապա հաստատէին
Ի պատիւ մօրն տեառն Յիսուսին.
Յաստուած բանող գերիմաստին,
Որ ներբողեաց զԱստուածածինն:

Մտեալ առաջի սրբոյ կուսին
Առհասատչեա թողուլ մաղթին,
Զկենդանագիր սուրբ պատկերին,
Սուրբ և մաքուր իրոյ տպին:

Որ և ընկալեալ զմաղթանս նոցին
Առաքելոց ընտրեալ գնդին,
Ետ ի նոսա փոխան իւրին
Սուրբ պատկերան մխիթարին:

Եւ յոյժ եղև նոցա խնդութիւն
Առաքելոցն ամենեսին,
Վասն սրբոյ կենդանագրին
Եւ պատկերի Սասնաճաճնին:

Իսկ ընդ կատար տուր և առին
Շնորհաց վերին և ներքնային,
Պատմաբանից ներբողիցին,
Զոր ընծայեաց աստուած հոգին:

Եւ ընդ տալոյ երկրիս երկնին
Զերախայրիս զճնող քանին,
Առնուլ անտուտ փոխան նորին
Զնկարակերտ ձև կիպարին:

Ընդ այս և ձիրս անքննելին,
Զոր ի տեառնէ մեզ ընծային,
Այլ թէ չէաք արժան ամին,
Բայց ի տեառնէ պարգև լինին:

Որ ի վաղուց դարուց նախնին
Պահէր մարդկան յուսով ի լին,
Զտնօրէնութիւն ծննդեան փրկչին
Առիթ պատճառ Սասնաճաճին:

Եւ ընդ յանկել այսմ շնորհին
Սուրբն աւանդեաց զմաքուր հոգին,
Անտարակոյս յորդոյ ձեռին՝
Քրիստոս աստուած Յիսուս փրկչին:

Ոչ ըստ բնութեան մեր ցաւագին,
Զի մասն չէր ինչ ախտային,
Այլ գերագոյն մեր մարդկային
Շնորհս պարգևեալ աստուած նմին:

Որպէս ծննդեանն անդրանկին
Ցաւք և երկունք ոչ տիրեցին
Նոյն և ի ժամ հոգէվարին
Կիրք բնութեանս ոչ տանջեցին:

Ետ զհոգին յորդոյ ձեռին,
Միայն մնաց տուփըն խնգին,
Եկեալ մաքուր դասք կուսանին
Բարձեալ եդին դատիկոնին:

Ապա դասուց սրբոց կուսին
Յաշակերտաց դասն խառնին,
Զաստուածաբարձ տանարն բարձին.
Օրհնէրգութեամբ սաղմոսէին:

ՅՌԷԹԷՆՈՍ մեծաւ ձայնին
Ընկերացաւ սրբազանին,
Եղանակաւ երգաբանեն՝
Ներբողենի և նուագին:

Եւ ձայնակցեալ դասք երկնային
Ընդ երջանիկ սուրբ գումարին,
Սիրահամբաւ պարք անմարմին
Եղանակեն զերգս կուսին:

Յորմէ քաղաքն դղրդին,
Հրէականացն սրտմտին,
Յանդգնութեամբ անդ գումարին
Շլաշութեամբ անդրէն հարին:

Եւ մերձեցեալ մաքուր կուսին
Կոյսն Յովհաննէս մօր անեղին,
Պատեաց մաքուր կտաօք ինքնին
Զաստուածաբնակ մարմին կուսին:

Այլն եդեալ ի դագաղին
Զպսակն ոստոց բրաբիոնին,
Զգեալ ծածկոց Յովհաննիսին
Զպատանս տեառն կենարարին:

Իբր պատիւ այն Յովհաննին
Ընդ առաքելոցն այլ ատելին,
Քանզի կոչեալ էր նա որդի
Աստուածամօր Մարիամին:

Պետրոս ունէր յիրում ձեռին
Զպատկեր սրբոյ Աստուածածնին,
Եւ Յակոբոս եղբայր փրկչին՝
Ըզտէրունեան նշան խաչին:

Թովմաս ունէր զքորվառ խնկին
'Ի այլ առաքեալքն երգս երգէին.
Բարձին ի լուս ամենեքին
Սուրբ առաքեալքն՝ զկուսին մարմին:

Առեալ տանին զմայր միածնին
Ի հանգստեան դիր տապանին
Եւ լսէին զձայնս հրեշտակաց,
Որք պար առեալ օրհներգէին:

Պետրոս զելիցըն սաղմոսին
Սկսաւ ասել ըստ խորհրդին,
Յելանելն Իսրայելի յԵգիպտոսին
Եղանակէ զալելուին:

Միաձայնեալ սրբոյ գնդին
Առաքելոց դասք երամին
Եւ կուսանաց մաքրագունին
Ընդ երկնայնոց խըմբից վերին:

Լսել ողբոյ զերգս սաղմոսին,
Քաղցր և անուշ եղանակին,
Յորմէ քաղաքն դըղրդին,
Հրէականքն սրտմտին:

Յանդգնութեամբ անդ գումարին,
Շլաշութեամբ հարեալ լինին,
Զի գիշահանձք էին բնաւին
Եւ տիրասպանք ամեննին:

Մինն, որ անունն Սոփոնիայ
Մինչ ի դագաղն լրբենայ,
Սուր հրեշտակին անդ մերկենայ,
Զեոքն յարմրնկացն մնայ:

Զայնէր Պետրոս. «Ո՛վ չար ոգիք,
Ազգ անհաւատք և խատասիրտք,
Ժանդախորհուրդք և թերամիտք,
Մինչև ցո՛ր վայր յայտ յամառիք:

Զիա՛րդ ոչ բոլորովին
Զղջայք յանզեղջ ձերոց սրտին,
Այլ կայք հետտեալք հետ սատանին,
Որ հայր է ձեզ գործովք չարին»:

Ասէ Պետրոս հրէից ազգին.
«Դարձիք առ տէր սրտի ի լին,
Խոստովանել զմեղս ձեր անձին,
Հաւատացէք յԱստուածածին:

Սուրբ կոյս քաղցր է ի բարին,
Գթայ ի ձեզ սիրով սրտին,
Զի բարեխօս է մարդկային
Առ միածին խաչեալ որդին»:

Յայնժամ գոչեն մեծաւ ձայնին
Զխաչեալն աստուած խոստովանին,
Առ տիրամայրըն հառաչեն,
Ի յօգնութիւն ինքեանց կոչեն:

Պետրոս բանի սաստէ ցաւին,
Փոյթ ի յաշացըն փարատին,
Զհատեալ կախեալ ձեռ դագաղին՝
Յարէ դարձեալ ի նոյն մարմին:

Աստ սքանչելիք բազում լինին,
Զի որք խրոխտ փքով եկին,
Յափշտակել զկուսին մարմին,
Զի մի փառօք մեծարիցին:

Նոյն և ինքեանք զոր խորհէին,
Առին պատիժ կրկին-կրկին,
Որպէս յառաջ քան զմահ կուսին՝
Ի սուրբ կուսէն պատուհասին:

Զոր և ցուցից զփոքրն ի բազմին
Եւ զսակաւն ի յոլովին,
Զի չարչարանս բազումս ցուցին
Ծնօղ ի սրբոյ տեառն Յիսուսին:

Կայիափայ՝ ՚ւ ազգն հրէին
Վիշտս և վտանգս նմա տային,
Զի ոչ թողուլ յոյժ ջանային
Գնալ ի սուրբ գերեզմանին:

Եւ այլ տեղիս տնօրհնին
Տեառն Յիսուսի մերոյ փրկչին,
Զի միշտ կանխէր բաղձմամբ սրտին,
Աղօթս առնել ի սուրբ տեղին:

Զի ի սպանանելն Յակոբոսին՝
Եղբօր տեառն Յիսուս փրկչին,
Երթեալք ի տունն հուր հարին,
Յորում բնակէր մայր կենսատուին:

Շրջապատեալ հուրն զհրէին
Կիզեաց եօթն այր ի նոսին
Եւ զԱննայ, զԿայիափայ,
Զքահանայապետ անուն Ղևին:

Եւ տան սրբոյ Մարիամին
Վնաս չեղև ամենևին,
Որք երկուցեալք ոչ իշխէին
Համարձակել յանձն կուսին:

Եւ ի յաւուր մկրտութեան
Խուժադուժաց ազգ հրէին
Գնացեալ հրոսակք Յորդանանին՝
Ըմբռնել զկոյսն ընդ Յոհանին:

Իսկ հրեշտակին, անեալ զնոսին,
Եդ ի յայնկոյս Յորդանանին,
Եւ հրէիցն անցել կամին՝
Այրս քսան կորեալ բնաւին:

Եւ ի յաւուրս համբարձման
Տեառն ի լերինն Զիթենին,
Յախտուն քարամբք յարձակէին
Հրէից՝ հասեալ առ սրբուհին:

Որք և զմիմեանս հարեալ քարամբք,
Արս հիսուն անդ սատակին.
Այսքան հրաշից 'ի այլ ատելին
Յառաջ եղեալ ննջման կուսին:

Եւ զի չէր յանկ ի սոյն կարգին
Պատմաբանեալ վասն այս սքանչելին,
Այլ զի դէպ չեղև նախկին
Կամս ակամայ սատ պատահին:

Դարձեալ սկսայց ի նոյն հրաշին
Զոր ի նընջմանըն կատարին,
Յետ կուրուրեան հրէից ազգին
Եւ հատման ձեռին Սոփոնիային:

Բազումք անդէն հաւատային
Քարոզութեամբ Պետրոս վիմին,
ԶՔրիստոս աստուած խոստովանին,
Մկրտութեամբ լուսաւորին:

Ազգ հեթանոսք և հրէին
Զկոյսն սուրբ դաւանէին,
Այլ և բորոտք և ախտաժետք
Սուրբ պատկերաւն տեառնագրէին:

Այլև ի իղով օժանէին
Մաքուր ձեռօք առաքելին,
Որք առժամայն բժշկէին
Յախտից բազմաց ազատէին:

Մինչև համբաւ մեծի հրաշին
Ծագմամբ լուսոյն ընթանային
Ի յամենայն Հրէաստանին,
Նշանքն եղեալ ձեռօք կուսին:

Իսկ զմեռեալդ ի կենդանին
Տարեալ ի կէտըն պայմանին,
Զոր վաղագոյն տեսունէ յայտնին՝
Զորն անուանեալ Գեթսամանին:

Ընդ համբառնալ զօրոց վերին
Ի Խորափիտն ամփոփէին,
Ըստ տիրական պատուիրանին՝
Ըզգուշացեալ պինդ պահէին:

Յաւուրս երիս անդրէն գալով
Ուստի երգոց ձայն լսելով,
Ապա լռեալ զտեղի կալով
Հնչիւնքն ձայնին դադարելով:

Այն ինչ հոգւոյն տնօրհնեալ
Բարդուղիմէոս յետոյ հասեալ՝
Այն որ ի Հայս շրջագայեալ
Եւ ընդ Թովմայի Հնդիկն գնացեալ:

Առեալ ի սուք մեծի նստէր
Եւ եղկելով զանձն կոծէր,
Յողջոյն սուրբ մօրըն փափաքէր,
Ընդ օրհնութիւնս տոչորէր:

Եւ զառաքեալսն բռնագրօւէր,
Զաստուածային գանձն հայցէր,
Զմարմինն օրհնեալ կուսին ժտէր,
Զի յոյժ փափաք առ նա ունէր:

Ընդ որ առաքեալքն տրտմէին
Խորհեալ գնդից մետասանին.
«Բացցուք զգանձն աստուածային,
Առ ի լնուլ զիղձս սրտին»:

Փոքու հօտին համայգումար
Սուրբ կուսանօքն խումբ առեալ,
Բացին զտապանն ամէնօրհնեալ
Եւ զկտաւիսն անդր գտեալ:

Ո՛վ հրաշալին ելանելոյն
Յառագաստէ ստեղն ծխոյն,
Զմուռ, կնդրուկ, փոշեաց յիւղոյն
Յիւղեփեցեաց մաքուր խնկոյն:

Վաթսուն գոլով վահանատրք
Ընդ արքային մեծի գահոյք,
Հմուտ մարտի պատերազմողք
Օդականացն արհարատրք:

Ել ի սենեակ մօրն վերին՝
Գեր ի վերոյ վեհ եթերին,
Ի պատրաստեալն հայրենին՝
Յանտես յանլուր յանբերելին:

Կրկին ի սուք նա մտանէր,
Որ և մարմնոյն ոչ ժամանէր,
Խղճի մտացն աւաղէր
Եւ անձամբ զանձն ըստգտանէր:

Վասն այս է՛ր սուք Բարդուղէմին,
Զի լուսւոյ զօրհներգութիւն,
Զոր հնչէին դասք սրովքէին
Եւ ոչ զդին ի տապանին:

Մինչ ի հոգոյն բան ազդեցաւ՝
Գնդին սրբոյ յայնժամ ցուցաւ,
Նշխար փայտին, որ շնորհեցաւ՝
Բարդուղիմայ վիճակեցաւ:

Ետուն նմա միսիթարիչ,
Առ ընկալաւ իբր սփոփիչ,
Երկրպագեաց սուրբ համբուրիւ
Զտրտմութեանցն ապաքինիչ:

Անդրէն յոքունց ախտաժետաց
Հրէաստանէն և որք յեկաց,
Անդորրութիւն գտան վշտաց
Սուրբ պատկերէն և յօծանաց:

Ապա զեղբարսըն ողջունեալ,
Ընդ արևելս կրկին դիմեալ,
Ի վիճակն պարտ էր գնալ,
Յոր Սանատրուկ զԹաղէ սպանեալ:

Զանդրժելի գանձն քարձեալ
Ընդ միջերկրայս տարակացեալ,
Զվիճական այնու զանցեալ
Ընդ մոգաստանս գնայր դարձեալ:

Մինչ ի քաղաքըն Խորասան
Աթոռ անցա արքայութեան,
Ուր և շիջոյց զկրակարանն
Եւ լոյս կանգնեաց հրոյն փոխան:

Եւ զլուսատուն մարդկան հոգւոց
Արեգականն ընդդէմ կացոյց՝
Զակն լուսոյ այս փորուածոյս
Երեք ժամաւ խաւարեցոյց:

Բայց ապառաժն անպտղական
Ոչ անեցոյց ըստ սուրբ սերման,
Միայն յութից որք ընտրեցան
Եւ ի անանէ մկրտեցան:

Նոքօք դառնայ ի անցանէ,
Կրկին ի Հայս դարձեալ դիմէ,
Ի Գողթ գաւառն մտանէ,
Զքազումս ի տէր դարձուցանէ:

Զանբիժ հաւատն անդ հաստատեաց,
Զարսն անցա գլուխ կարգեաց,
Առեալ զոմանս, որք ի կանանց,
Եկեալ յերկիրն Անձկացեաց:

Առ ի համբաւ քարի միոջ,
Յոր էր աղուեսն ամբացեալ յորջ,
Ընդ Անահտայ բնակէր տիկնոջ՝
Մարդախոշոշ կռանագոջ:

Քանզի փայլակն ի վայր անկեալ,
Ի Դարբնաց քրայս արկեալ,
Զդեղն, որ կազմէր ախտի խառնեալ,
Յուռութ ուլունս մակարդացեալ:

Որպէս և ճառն պատմական
Ոսուցանէ մեզ միաբան
Եւ զվիշապին հին մեքենայն
Կիպրիանոս այր սրբազան:

Զի հին վիշապն անդ բունէր
Եւ կռանին համաձայնէր.
Բախմամբ թնդմանն ահ արկանէր,
Զնոսա յուշոյ միշտ խափանէր:

Իսկ արք տեղւոյն զերդ խելագար
Անդ խոնէին դեգերաբար,
Թարախածոր առեալ ծրար
Եւ կոչէին Դարբընաբար:

Յայս վայր հասեալ առաքելոյն
Փութով խափան առնէր գործոյն,
Դարբնական բախման թընդոյն,
Որ գործօնեայք էին նիւթոյն:

Եւ գղիցամայրն խորտակեաց,
Զբռնութիւն քակեալ դիւաց,
Քարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք գործեաց:

Իսկ չար զինուորքն գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձրու լերինն,
Վիրգս ի վիմացն յայն հոսէին,
Ընդ այն և ճիշտ արձակէին:

Բարդուղիմեայ զայն տեսանէ,
Բարձրաւանդակ լեռնն ելանէ,
Խաչ փոքրիկ անդ օծանէ,
Քարիւ մի զքաջքն արտահանէ:

Զոր և յետոյ սուրբն Գրիգոր
Զարձանն առեալ պահէր ընդ իւր,
Մինչ Տրդատայ մահուանն յաւոր
Երեսին եդ պսակաւոր:

Կանգնէ և անդ կրկին ճշան
Յստորոտով լերինն յայն,
Կարկառակոյտ մի սուգական
Զեռնադրեալ ի մեծ արձան:

Եւ է տեղին յոյժ լեռնափակ,
Պատեալ վիմօք երկնադիտակ,
Իսկ մէջ ծոցոյն հարթայատակ,
Հոսանահերձ վհաքատակ:

Զի Տիգրիսին մեծի կայլակ,
Որ յԱդենայ քառորդ վտակ,
Ցասմամբ խաղայ միշտ համարձակ
Ընդ գոգ հովտին արագ-արագ:

Մերձ Կանգուար մեծ ամրոցին,
Որ Ագուաուց քար կոչէին,
Ոստի լերանցն ջուրք հոսէին
Եւ գետանան ընդ գարնան մասին:

Գայ զառիվայր առապարին,
Անցեալ ընդ հիմն տաճարին,
Ընդ արքային շիրմով պարին,
Ապա ի մի խառնեալ յարին:

Հիմն արկանէ անդ հաւատոյ
Ընդ խորանին կառուցելոյ,
Ծինեալ յանուն կուսին հոգւոյ
Եւ պատկերին, որ անդ սրբոյ:

Արդ առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իրով ձեռին,
Փոքր ձևով զեկեղեցին
Եւ անուանէ Աստուածածին:

Զտեղին Հոգւոց վանք անուանէ
Եւ ի քրտրս կանայս յանձնէ,
Խրճիթ փոքրիկ անցա շինէ
Եւ ի դերբուկս բաժանէ:

Կացուցանէ զքոյրն Յուսիատայ՝
Մայրապետ կրօնից՝ գլուխ անցա,
Զքոյրն Օրմզդայ և Մաքովտրայ
Եւ զայլ կանայսն յետ անցա:

Եւ ինքն ի Հայս դարձեալ երթայ
Ի յՈւրբանիս քաղաք Բարմայ,
Որ այժմ Աղբակ կոչի անոռա
Յովքիանոս անուանի անա:

Վասն սրբոյ առաքելոյն,
Որ չարչարեալ եղև ի անոն,
Քրոյլ հարեալ յերկարագոյն,
Ըստ այսմ կոչի անուն տեղոյն:

Զի զկսկիծըս դառնագոյն,
Զոր ոչ կրեաց մարդ որ զանոն,
Զի անդ հանաւ մորթ ի մարմնոյն
՚Ի ինքն շրջէր կենդանագոյն:

Եւ անդ հաւատս ընծայեցաւ
Եւ անորահրաշ ինչ յայտնեցաւ,
Զի ապամորթ մարդն կեցաւ,
Ապա սրբոյ կատարեցաւ:

Իսկ Մարիամ առանձնացեալ
Քոյր Յուսիատա՝ Յուսկանն կոչեցեալ,
Յայն կոյս գետիկն մեծի անցեալ,
Առ ոտս փոքու վիմի կացեալ:

Որ և անդէն յուսով մեծաւ
Անմարմնաբար ճգանց տարաւ
Եւ ինքն ի նոյն մարմնով մեռաւ
Եւ անտանօր իսկ թաղեցաւ:

Եւ նա զԱննա քոյրն իւր կացոյց
Յետ իւր տեղոյն խրատող նոցունց,
Որ և նորին զվարս անմարմնոց
Տըտալ յետնոցըն ապացոյց:

Ինքն հետևեալ սրբոց հետոց,
Շինեալ խրճիթ աղօթանոց,
Գագաթ վիմին ամրակառոց,
Որ և կոչի քար Դարբնոց:

Եւ է հանդէպ մենաստանին,
Դիմաց գոլով արևելին,
Անդ աղօթէր թիկանց վիմին
Բաղձմամբ սիրոյ տեառն արարչին:

Փոքու ատուրբք անդ ճգնեցաւ
Եւ ի նոյնում կատարեցաւ,
Օրմզդադա՛ քոյր Մարթայ,
Փոխան նորա գլուխ կացաւ:

Նոյնպէս միմեանց յաջորդ գոլով
Հարստակրօն յատուրս յոլով,
Մինչ ի վերուստ երևելով
Այցելութիւն տեառն հոգոյ:

Զքազումս ի տէր մկրտէին,
Զախտս ի մարմնոց փարատէին
Եւ երթալով տեառն երթային,
Օրըստօրէ յաւելուին:

Մինչ ի յաւուրըս Գրիգորի,
Սրբոյն մերոյ Լուսաւորչի,
Վանք մեծափառ ըստ արժանոյն
Ի արհիական աթոռ կարգի:

Շինէ գտաճարն սուրբ Սիոն
Զեղբայրանոցս ի բնակութիւն,
Բայց զհաստեալն յառաքելոյն
Ոչ նոր փոխեաց, այլ կայ ի նոյն:

Այլն զդասս պաշտօնէին
Կարգեաց ի փառս աստուածային,
Օրհնել զՀայր և զՈրդին
Զամենասուրբ աստուած զՀոգին:

Քահանայից սարկաւագին,
Դպրաց ընդ նոյն գղերիկոսին,
Զանլոելի փառս հնչէին
Երրորդութեան ի միասին:

Առ ի գտանել զողորմութիւն,
Ոյք ըղձային բաղձմամբ սրտին,
Ի ձեռն սուրբ Աստուածածնին,
Յորոյն անուն ուխտն կանգնին:

Որ բարեխօս է բոլորին
Ազգի համայն քրիստոնէին,
Առ միաձին Յիսուս որդին՝
Փրկել զճնունդ աազանին:

Ընդ նմին և սուրբ Բարդուղիմին
Տեառն Յիսուսի առաքելին
Եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչին
Զմեզ խառնէ առ Քրիստոսին:

Նոցին կցորդ Թադէոսին,
Ըր առաքեալն է Հայկազնին,
Որոյ առաք զհատ մարգարտին՝
Զհաւատն ուղիղ՝ շնորհիւ սորին:

Այս շորեքումքք վիմօք հաստին
Յինուածք մերոյ սուրբ հաւատին,
Ծննդեամբ սրբոյ Աստուածածնին,
Որ է միջնորդ մեզ առ Որդին:

Այլն արքմամբ հոգոյ շնորհին
Քարոզութեամբ Թադէոսին,
Զոր վիճակեալ առաքելոց
Հայք մասն եղեալ Թադէոսին:

Այլն երկունք մեր լուսատուին
Զարչարանօք մասն երկոքին,
Երիւք հնգօք ամօք ելին
Կրեաց ընդ տեառն զպակասն նորին:

Որով վշտօք իւրոյ անձին
Զմեզ ի խորոց եհան ներքին,
Ընդ տեանն լծեաց պատուիրանին,
Արար հաղորդ անմահ բանին:

Նոյն և սրբոյ Բարդուղիմին,
Որոյ պատճառ եղեալ սորին
Կենդանագիր սուրբ պատկերին
Եւ շինութեան սուրբ տաճարին:

Այլ և Ներսէս, որ վիճակեաց
Ըզսուրբ աթոռն իւր հայրենեաց,
Եղեալ տեղիք հոգոյն շնորհաց,
Սին և կանգնիչ Հայաստանեաց:

Զի զաւանդեալ հարցն առաջին
Զուխտ կտակի պատուիրանին,
Սա նորոգէ դարձեալ կրկին
Կարգ և կանոնս մեզ՝ հոգով լին:

Շինեալ տաճար անթելին
Ընծայարան զեմման գառին,
Փռտկայս, պանդոկս և հիրանոց
Լինել հանգիստ վտանգատորին:

Արդ ընդ սոցա թըրոց բազմաց,
Որ և սովաւ եղեն շինած,
Մինն ի բազմանց սա է կազմած,
Որ Հոգեաց վանս է նախճայնած:

Սա զախտակրեալսն անդ ժողովեաց
Եւ ախտաբախս հաստնաւեաց,
Որք անդ կացցեն սիրով կամաց,
Առցեն շնորհս զանանց:

Որք առնուին ըստ հաւատոյ
Զառողջութիւն ախտից մարմնոյ,
Մինչև ցայսօր տայ ըստ յուսոյ
Զնիւթական ըստ աննիւթոյ:

Եւ կայ, մնայ յամեալ ի նմին
Հրաշագործ նոյն զօրութիւն,
Որով բազում բժշկութիւն
Լինի ախտից՝ ի ուրախութիւն:

Անուամբ սրբոյ Աստուածածնին
Կենդանագիր իւր պատկերին,
Ոչ սակաւութ մարմնով բուժին,
Այլև հոգով լուսաւորին:

Որք գան յուսով հաւատալին
Ունել միջնորդ զԱստուածածինն,
Զամէնօրհնեալ ծնօղ բանին,
Զմայրն աստուծոյ զկոյս տիրուհին:

Եւ որք խնդրեն սիրով ի լին,
Առնուն ըստ խոստմանն Քրիստոսին,
Եւ պարգևեալ տացի բարիս
Ողորմութեամբն աստուածային:

Փառաւորել զՀայր և զՈրդին
Զանմեկնելի աստուած Հոգին,
Այժմ և յանկէտ յաւիտեանին,
Որ միշտ օրհնի յէականին:

Եւ զի գիտել մեր զայս պարտին
Յետ սուրբ ծննդեանն Աստուածածնին,
Ի ծնօղաց իւր պանծալի
Երեք ամաց եղև բերին:

Ընծայիք պատարագին
Եւ մատաղօք ի տաճարին,
Անդէն դարձեալ ի տուն տանին
'Ի յամէն տարի տաճարն բերին:

Մինչ ի լնուլ եօթեանց ամին,
Այլ ոչ տարան յիրեանց տնին,
Այլ սնանին ի տաճարին
Սուրբ և մաքուր առաքինին:

Սպասաւորեալ հրեշտակք անին,
Իջեալ երկնից հոյլք անմարմին,
Մանանայի կերակրէին,
Որ բերէին զայն իսկ նոքին:

Եօթն ամալ ի տաճարին
Բնակեցաւ սուրբ աղաւնին,
Եւ ի լնուլ եօթնից կրկին
Չորեքտասան ամաց անին:

Ետուն Յովսէփ պահապանութիւն
Ըստ օրինաց Իսրայէլին,
Ամիսս երիս առ նա լինի
Կնքեալ ամբողջ սուրբ տօմարին:

Ապա հրեշտակ Գաբրիէլին
Հրաման առնու աստուածային
Եւ ատետիս տայ սուրբ կուսին՝
Ծնանի ի քէն աստուածորդին:

Եւ ի լսել զձայն ատետին՝
Իջեալ առ նա աստուած հոգին.
Կազմեաց գահոյս թագաւորին
Հօր անեղի որդոյն մեծին:

Եւ յինն ամսեա լրման անորին,
Հնգից ատուրքք յաւել որդին,
Բնակէ յարգանդ սրբոյ կուսին,
Հնգէտասան ծնանի յամին:

Եւ հաւրարձման տեառն ի յերկին
Քառիւր տասամբք ութ ատելին,
Ամօք լցեալ այսքան էին
Ծնօղի բանին կենարարին:

Եւ ի անջման մօր անեղին
Վաթսուն ամօք բովանդակին,
Յորում ատուր ծնեալ անին.
Քսաննհինգ աի ամսին:

Ի նոյն ատուրն վախճանի
Գերապայծառ մայր միածինն.
Եւ էր հասակ սրբոյ կուսին
Երկայն, սպիտակ, շնորհիւ ի լին:

Աստուածային օթարանին
Երկայն մատունք գոլ հրաշալին,
Այսպէս զարման գեղ գոլելին,
Որ չէ եղեալ ազգ մարդկային:

Ո՛վ անբաղդադ հրափայլ դիմին
Գերամաքուր տիպ պատկերին,
Զկրօղ էիցս ամենայնին,
Տարեալ պահէր յիր սենեկին:

Որք ընդ աղօտ ակնարկէին
Հոյլք սրովքէից գոնեայ մասին,
Նկատել ի լոյս աստուածային,
Զոր կոյսն սուրք կրեաց յանձին:

Սա զբովանդակ լուսոյն արփին
Տարեալ եղև յիր յարգանդին
Եւ զփրկութիւն մեզ շնորհողին
Ծնաւ որդի զբանն անմարմին:

Որով մեզ յոյս տըլաւ կրկին
Դառնալ անդրէն առ հայրենին
Եւ ժառանգել զանճառ բարին
Ի հանդերձեալ դատաստանին:

Արդ ամենայն եղեալ բարին
Որով տուա մարդկան ազին,
Գոլով պատճառ կոյսն հրաշալի
Առիթ կենաց մեր ամենին:

Որպէս ծնունդ հրաշիւք կուսին
Նոյնպէս սնունդն բարեօք ի լին,
Այսպէս փոխումն յերկրէս յերկին
Դասիւք զուարթնոցն վեր ամփոփին:

Այսու պարծիւմ ես նշանաւ,
Որ ի կայիս մեր հանգուցաւ
Եւ արքայիս գերեզմանաւ,
Որ հանգուցեալ ընդ հովանեաւ:

Եւ կայ առցէ բանս աստանօր,
Որ ի պատիւ աստուածոյն մօր,
Ի փառս Հոգոյն Որդոյ և Հօր,
Երրորդութեանն համազօր:

Ով սրբունի կոյս Մարիամ,
Վիմածին լեառն և սուրբ խորան,
Ի գալստեան կրկին անգամ
Քոյոյ որդոյդ ի դատաստան,

Հանդիսանալ ընդ քոյ յայնժամ
Բարեխօսել վասն մարդկան,
Կրկնեա՛ և ծունր մի անգամ
Վասըն հիքոյս մեծ կործանման:

Մի ընդ անյուսիցն խարխափման
Խաւար մտօք մոլորական,
Դարձայց դիմօք պատկառական,
Զի հաւատով ի քեզ յուսամ:

Այլ ընդ նոսա, որք զղջացան
Եւ գթութիւն դարձեալ գտան,
Գիտ զհոգիս վըտարական
Եւ միաճնիդ կալ յանդիման:

Բախմամբս զդուռն արքայական
Հայցեա բանալ զողորմութիւն,
Եւ բարձրացի փառք տէրութեան
Ընդ փոքրոգոյս մեծ փրկութեան:

Առ որ գոչեմ հառաչական
Ի խոր սրտէ աւաղական,
Զխոցեալ հոգիս բիր ցանկութեամբ
Առողջացո՛ւ անապական:

Զանկեալ գերիս հոգով յանցման
Կանգնեա՛, սուրբ կոյս, քոյի՛ն անուամբ,
Լեր և միջնորդ ինձ գթական
Առ միաճինդ անմահ արքայն:

Զի զհոգիս թշուառական
Ազատեցէ իւրով արեամբ
Եւ զկործանեալս շարեօք յանցման
Կանգնէ յուսով ողորմութեան:

Սաստիկ կեղով բորոտութեան
Սպառեաց զմարմինս անեզրական:
Չար թշնամին կորըստական,
Որ ի յանդունս ունի դարան:

Տպաւորեաց հոգիս զբնականն
Գէջ ախտութեամբ անյագական,
Այլ աղաչեմ զկոյսդ մաքրական՝
Տա՛լ սպեղանիս հոգոյս դարման:

Եւ զանուղղագործ զազրական,
Որ զՍողոմ արար կործան,
Տնկեաց ի յիս գոլ բնական,
Տանջել նովիմբ անեզրական:

Փարեալ զոտիցդ անապական,
Խնդրեմ զդեղ հոգոյս խոցման՝
Կաթիլ միայն քո կուսութեան
Ինձ փրկութեան է բաւական:

Ախտից մեղաց զիս օթարան
Արար տեղի և կայարան,
Եօթնից չարեաց հոգոյ մահուան
Սպանեալ զանձինըս կրկնական:

Նոր փառութեամբ հպարտական
Եւ նախանձու հոգոյս այրման
Եւ բարկութեամբ զայրացան՝
Եղէ ես չար քան զգազան:

Ո՛վ տիրամայր անապական,
Առիթ կենաց ինձ փրկութեան,
Զերիս շարիս հոգոյս յանցման
Քաւեա քո սուրբ որդոյդ արեամբ:

Սոյնպէս զմարմնոյս մասունս մահուան
Չորից կերպիցն եղէ դարան,
Ծոյլ ի բարիսն յամառութեամբ
Ազահորկոր պողընկական:

Մատիր յաղերս, կոյս Մարիամ,
Առ ծնեալդ ի քէն աստուածըն բան,
Տալ սպեղանիս եօթեանց յանցման
Հոգոյս, մարմնոյս, որ գործեցան:

Երես ի վայր կամ ի յանկման,
Թըլով լցեալ է Յորբեան,
Ըստ այսմ ճառիս որ զըրացան
Հոլով յաւարտ կատարեցան:

Ղօղեալ մեղօքս գոլ ի սուզման
Գնամ յատակս կորըստեան,
Զմայրդ կենաց իմ յարուցման,
Հայցեմ լինել ինձ օգնական:

Առնել հնար ինձ վերածման
Ի խոր մեղացս, որ կամ թաղման՝
Տալով հիքոյս ուժիտ փրկան,
Զյոյս միածնիդ ազատութեան:

'Ի իսեալ բանիս հառաչական
Զկոչսդ աղաչեմ սրտիս բաղձմամբ,
Վասն ճարիս նախնոյ շարման
Տամբք հարիւրից գոլ ի լրման:

Որոյ բաբուն Ներսէս անուն
Առիթ գոլով յառաջագոյն,
Յերուսաղէմ խնդրեալ նորուն
Տունըս հարիւր յարեաց ընդ նոյն:

Րոտմամբ սիրոյ սրբոյ կուսիդ
Յաղթեալ անգա ի խոյզ բանիս,
Կազմել թոշակ հոգոյս վիրիս
Լոկ ի յանունս գոլ պսակիս:

Սիրով քոյին ծնող բանին
Շարեալ եդի ընդ նախնի ճարին,
Տունս հինգ յիսուն անելորդին՝
Հոգոյն շնորհիւ յարեալ ի նմին:

**Այժմ դարձեալ ընդ նոյն շառիւն
Երգս երգեցից մօրդ անեղին,
Քեզ պատմաբանս ըստ այբուբենին
Ինձ ողբ և ձայնս լալագին:**

Աստուած հանուրց գոյականին,
Հայր անսկիզբն և անքննին:
Խորհեալ ընդ անեղ իւր ծոցածին
'Ի ընդ փառակից աստուած հոգին՝

Բան նոթասքանչ զարմանալի,
Որ չէր եղեալ բնաւ յերկրի,
Զի արարիչն ամենայնի
Զգեճու մաքմին հողեղինի:

«Գընա,— ասէ Գաբրիէլին,—
Տուր զաւետիս սրբոյ կուսին,
Թէ գայ աստուած բանն անմարմին,
Ծնանի ի քէն անճատելին»:

Դասուք վերնոց հրեղէն գնդին
Հոգին աստուած անզննելին,
Ծաշմամբ ահեղ և մեղմագին
Եկաւորի առ սրբուհին:

Եւ ընդ ասել Գաբրիէլին.
«Քեզ հովանի է սուրբ Հոգին»,
Նոյնժամ մտեալ աստուած հոգին,
Տեղ պատրաստեաց իւր էակցին:

Զայնմ պահու Յիսուս որդին
Բնաւորեցաւ յարգանդ կուսին
Եւ ձևացոյց իւրն մարմին
Միտք և հոգի բանականին:

Էր ի յերկինս բոլորովին
Ընդ հօր հոգով ի յաթոռին,
Նոյն և բոլորն առ սրբուհին
Բովանդակեալ յորովայնին:

Ընտրեալն յառաջ իւրն տեղի
Քան զլինելն արարածի,
Ի մարդկային ազգէ սեռի
Զկոյսն հաճեալ օթագայի:

Թագ պարծանաց հողեղենի,
Բարձր աշտանակ եօթնալուսի,
Զխաւար հոգիս իմ զազրալի
Լուսաւորեա, կոյս սրբուհի:

Ժառանգ կենաց մօրն Եւայի,
Որք և գտաւ զնախնի տեղի,
Լեր յոյս և ինձ ապաւինի,
Զանկեալս կանգնել անդրդուելի:

Ի սուրբ յարգանդ քո և մաքուր
Ծրարեալ կրեցեր զանտանելին,
Հայցեա՛ յորդոյդ քո անքննին՝
Տալ օթեան ինձ յադենին:

Լրութեամբ ամսոց շորս և հնգին,
Այլ ատուրբք շորեակ և մին,
Զհուրն աստուծոյ բարձեր յանձին
Եւ ոչ կիզար բոցոյ ճորին:

Խանդաղատեալ այրմամբ սրտիս
Յայտնեմ զիղձս աղէտիս,
Որ թաւալեալս եմ ի տղմիս
Անբաւ շարեօքս, որ կայ ի յիս:

Ծունր կրկնեա առ տէր վասն իմ
Ծառոյ անթառամ կենաց պտղին,
Տալով ինձ կեանս առ ի բարին
Ազատ լինել յանհուն պարտին:

Կառք տէրութեան անմահ բանին
Եւ գերագոյն քերովբէին,
Բարձ ի հոգոյս զանտանելին
Զախտս մեղաց զազրագունին:

Հոյլք հրեղինաց ոչ իշխէին
Հալի գոնեա աղօտագին,
Կրեցեր յարգանդ քո կուսածին,
Զայն որ սարսեն դասք սրովբէին:

Զայնըն ատենեաց աստուածային
Հնչեալ ազդմամբ առ քո հոգին,
Հայցեա՛ւ ինձ լսել ձայնին
Զեկայք օրհնել յօրըն վերջին:

Ղամբար վառեալ ջահ արիւնին
Գգուեալ բարձեր զլոյսն անքննին,
Կառո և զիս յոտըս խաչին
Յահեղ ատր դատաստանին:

Ճար և հնար մարդկան սեռին
Եղեր, սուրբ կոյս Աստուածածին,
Լեր և գերոյս հոգով ախտին
Փրկե յանշէջ հրոյ գեհե՛ննին:

Մաքրեա՛ զյանցանըս բազմագին
Զանտես աչաց անթրուելին,
Զգորութիւն հոգոյս տասին
Զմտացս խորհուրդս գոլ ի շարին:

Յարփոյն վառեալ անշիջելի,
Կայծ, կարկեհան, գեղ հրաշալի,
Զդիմեալն ի մայրդ սուրբ միածնի
Խնդրեա՛ ազատ լինել յոգի:

Նոր նորոգող մարդկան ազգի,
Կոյս Տալիթայ, խորան լուսի,
Հա՛ն ի հոգոյս զաղտ զազրալի,
Զփտեալս մեղօք դառնագունի:

Շնորհաց հոգոյն ընդունարան,
Տուն Քրիստոսի գոլ օթևան,
Բարձեր ի գիրկ զանմահ արքայն,
Որ է մեզ կեանս և օգնական:

Ուստի գերեալս թշուառական,
Նշդեհացեալս թափառական,
Զքեզ ունիմ յոյս և վահան՝
Առ ծնեալ որդիդ քո տիրական:

Զքնաղ, ահեղ, զարմանալի,
Մայր անարատ ! Դանուէլի,
Զստածողն էիցս ամենայնի
Կաթն արբուցեալ քում ստենի:

Պարպատելոյս չարակրութեամբ,
Որկորամոլ ագահութեամբ,
Սուրբ և անաղտ քո մաքրութեամբ
Զիս ազատեա՛ արիութեամբ:

Զուր կենդանի անապական
Լուսցեր զհոտեալ շարաւ մարդկան,
Զգարշ աղտեղիս շռայլութեամբ
Մաքրեա քո սուրբ որդոյդ արեամբ:

Ռահ լուսոյ եղեմական,
Որով մարդիկք յերկինս ելան,
Որով և ես կամ և յուսամ
Քև աչց լի՛ ել ի դատաստան:

Սասանելոյս յարկէ շնորհին
Մօր իմ հոգոյ աւազանին,
Ի զանազան մեղս երկրային
Լքի զշնորհս մեծ խորհրդին:

Վերաբերեա դարձեալ կրկին:
Զանկեալ հոգիս յանել բանտին,
Քո հայցուածովդ քաղցրագին,
Զի համարձակ ես քո յորդին:

Տերըն փառաց աստուածորդին
Սնանի առ քեզ ամս երեսնին,
Յետ այնորիկ ի Յորդանան
Գայ, մկրտի առ ամլորդին:

Ռամեալ ընդ նոյն երից ամին
Կատարելով զտնօրէնութիւն,
Գայ կամաւ հօր ի մահ խաչին՝
Առ ի բառնալ զմեղս մարդկային:

Յուցեալ զգութ սիրոյ քոին
Իմ կեանքն և յոյսն առ ի խաչին,
Յանձնէ զքեզ առ Յովհաննին
Կոյսդ ի կուսէն պահպանիցին:

'Ի իսեալ ընդ նոյն հրաշս կրկին
Ի յարութեան ատուր մեծին,
Զօրս քառասուն միշտ երևի
Օրհնէ, սլանայ յերկինս երկնի:

Փառօք բազմօք եկաւորի
Յերկուտասան լրումն ամի,
Յետ համբարձման իւրոյ մեծի
Առեալ զքեզ վեր նա յերկնի:

Քանոն կատար եղև ճառիս
Շնորհի սրբոյ Աստուածածնիդ,
Փա՛ռք և պատիւ երրեակ անձին՝
Հօր և Որդոյ, Հոգոյ շնորհին:

Ո՛վ գերահրաշ արփիացեալ,
Որ յանմարմնոց ես ներբողեալ.
Գերամաքուր ջահաւորեալ
Կոյս տիրածին, ամէնօրհնեալ:

Ղեկօք դրուատ պատշաճավոր
Ով որ գովէ զքեզ յանկարի,
Որ երկնայնոց եւ ըղձարի
Եւ գերագոյն բաղդատար:

Ոչ որ յէիցըս մարդկային
Ճանել իշխէ զխորհուրդ քոյին.
Ոչ անմարմին, ոչ երկրածին,
Բայց թէ որդիս քո միածին:

Րոտեալ սրտիւ եւ թախճագին
Անգա ի յիղձըս փափագին,
Ոչ գիտելով ըստ պատշաճին
Յարել ի մի ոտն առ ոտին:

Մաղթեմ ի քէն, խորան բանին,
Թողու զպարտիս իմ բազմագին,
Զի ոչ զարժանն ըստ քո անձին
Երգեալ ետու զներբողիսին:

Եւ փանաքի գոլով անձին
Չեմ արժանի այսր մասին,
Թէպէտ անունս բոլոր կոչին
Պսակ և տեար Ստեփանոսին,

Այլ այս թըրիս որ յառաջեալ
Եւ բան զբան գոլով ծնեալ,
Նախ մին հարիւր Ներսէս ոգեալ,
Որ պըլէտ Մոկեաց մակձայնացեալ:

Յետ այսմ և մեր վստահացեալ՝
Բան ի բանից գոլ կըցկցեալ,
Երից հարիւրց մակագրեցեալ,
Համայնն չորիւք բովանդակեալ:

Փառս տացուք հօր անեղին
Եւ միածին բանի նորին,
Հոգոյն սրբոյ զարդարողին,
Որ ազատեաց զմեզ վերըստին: